



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3408

EPUS .20. #5

Հրատարակութիւն Խ. Հ. Ս. Հ. Ժողովր. Լուսաւորութեան Ալէք-պօլի բաժնի.

ԿՐՕՆԸ ԵՒ ԿՈՄՈՒՆԻԶՄԸ



Ալէքսանդրապօլ
Տպարան Հայաստ. Սոց. Խոր. Հանրապ.
1921 թ.

215

4-98

24.05.2013

3408

215
4-98

ԿՐՕՆԸ ԵՒ ԿՈՄՈՒՆԻԶՄԸ.

1) Թէ ինչո՞ւ կրօնն ու կոմունիզմը անհաշ-
տելի հասկացողութիւններ են: 2) Եկեղեցու բա-
ժանումը պետութիւնից: 3) Դպրոցի բաժանումը
եկեղեցուց: 4) Կռիւ մասսաների կրօնական
նախապաշարմունքների դէմ:

1) Թէ ԻՆՉՈՒ ԿՐՕՆՆ ՈՒ ԿՈՄՈՒՆԻԶՄԸ ԱՆՀԱՇՏԵԼԻ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ:

«Կրօնը ժողովրդի համար օպիում է», ասել
է Կ. Մարքսը: Կոմունիստական կուսակցութեան
նպատակն է այդ ճշմարտութիւնը հասկանալի
դարձնել աշխատաւոր մասսաների ամենալայն
շրջաններին: Կուսակցութեան նպատակը կայա-
նում է նրանում, որ բոլոր աշխատաւոր մասսա-
ները, մինչև իսկ ամենից յետամնացները, հաս-
տատապէս իւրացնեն այն ճշմարտութիւնը, որ
կրօնը կեղեքողների ձեռքում առաջ հանդիսա-
նում էր և այժմ էլ շարունակում է հանդիսա-
նալ ամենակարող գործիքներից մէկը՝ անհաւա-
սարութիւնը, շահագործումը և աշխատաւորու-
թեան ստրկական հնազանդութիւնը պահպանելու
գործում:



3924-84

Մի բանի միամիտ կոմունիստների այսպէս են դատում «Կրօնն ինձ չի խանգարում լինել կոմունիստ,—ես միակերպ հաւատու՛մ եմ և Աստուծոյն և կոմունիզմին: Դէպի աստուած ունեցածս հաւատը ինձ չի խանգարում կուել պրօլետարական յեղափոխութեան գործի համար»:

Այսպիսի դատողութիւնն հիմնովին սխալ է: Կրօնն ու կոմունիզմը անմիաբանելի են թէ թէօրիայում և թէ գործնականում:

Ամեն կոմունիստ պէտք է բնդունի, որ հասարակական երևոյթները (յարաբերութիւնները մարդկանց, յեղափոխութեան, պատերազմների միջև և այլն) տեղի են ունենում որոշ օրէնքներով: Հէնց հասարակական զարգացման օրէնքները հիմնաւորապէս ապացուցում են, որ Աստծու մասին ունեցած հասկացողութիւնը և «էն աշխարհի» աներևոյթ ոյժերը ունայն բաներ են: Այդ մեզ պարզ ցոյց է տալիս պատմական մատերիալիզմը, որ ստեղծուել է մեր մեծ ուսուցիչների՝ Վ. Մարքսի և Փրիզդրիխ Էնգելսի ջանքերով: Ըստ այդ թէօրիայի հասարակական զարգացման վրայ և ոչ մի գերբնական ոյժ չէ ներգործում: Այդ քիչ է: Այդ նոյն թէօրիան ապացուցում է, որ գէպի Աստուած և գէպի «անտի աշխարհի» ուժերն ունեցած հաւատը երեւան է եկել մարդկութեան պատմութեան որոշ աստիճանի վրայ և որոշ աստիճանի վրայ էլ սկսւում է անհտանալ, որպէս մի վայրենի երևակայութիւն, կեանքի պրակտիկայում և մարդու բնութեան դէմ մղած կռոււմ չապացուցող մի երե-

ւոյթ: Եւ կեղերող դասակարգերը իրենց օգտի համար (միմիայն այդ պատճառով) ժողովրդին տղիտութեան մէջ են պահել ու աւելի զարկ տւել նրա մանկական հաւատին: Գէպի հրաշագործութիւնները (իսկ այդ հրաշագործութիւնների բանալին պահում են իրենց գրգանում), և կրօնական նախապաշարմունքները շատ կենսունակ են հանդիսանում ու մոլորեցնում նոյն իսկ շատ խելօք մարդկանց:

Գերբնական ոյժերը չեն ազդում բնութեան մէջ կատարւող և ոչ մի փոփոխութեան վրայ: Մարդը հսկայական յաջողութիւններ է ունեցել բնութեան դէմ մղած կռոււմ, ազդում է նրա վրայ, օգտագործում յօգուտ իրեն և կառավարում նրան ուժերով, և ոչ թէ գէպի Աստուած ունեցած հաւատի ու Աստծու օգնութեան շնորհիւ, այլ առանց ուշադրութիւն դարձնելու այդ կրօնի վրայ. նա այդ անում է շնորհիւ այն հանգամանքի, որ պրակտիկայում ամեն տեղակ լուրջ գործերում մարդը հանդիսանում է որպէս աթէլիստ: Գիտական կոմունիզմը, բնութեան բոլոր երևոյթների իր բմբոնողութեամբ հիմնւում է բնական գիտութիւնների տեսալների վրայ, որոնք անհաշտ թշնամի են կրօնական ամեն տեսակ հնարագիտութիւնների, կեղծիքների:

Բայց կոմունիզմը անմիաբանելի է կրօնական հաւատի հետ նաև պրակտիկայում: Կոմունիստական կուսակցութեան տակտիկան իր անդամներին որոշ գործելակերպ է առաջադրում: Իւրաքանչիւր կրօնի մօրալն ևս իր հաւատա-

ցեալներին առաջադրում է որոշ տեսակի վարք ու բարք (օրինակ՝ քրիստոնէական մօրալը՝ «եթէ մէկը խփում է զէմբիզ, շուռ տուր չաւ միւսը»)։ Կոմունիստական տակտիկայի և կրօնի պատուիրանների դիրքերի վերաբերյալ միջև մեծագոյն մասամբ անհաշտելի հակասութիւն ենք տեսնում։

Այն կոմունիստը, որ զէն է շարտել կրօնի պատուիրանները և կուսակցութեան առաջադրութիւնների համաձայն է վարում, — զազարում է հաւատացող լինելուց։ Իսկ այն հաւատացողը, որ իրեն կոմունիստ է անւանում և որը կուսակցութեան առաջադրութիւններն է խանգարում յանուն կրօնի պատուիրանների, — զազարում է կոմունիստ լինելուց։

Կրօնի զէմ մղած կռիւը երկու կողմ ունի, որ իւրաքանչիւր կոմունիստ պէտք է խիստ կերպով տարբերէ։ Նախ՝ կռիւը եկեղեցու զէմ, որպէս կրօնական պրօպագանդայի առանձին հիմնարկութեան զէմ, որը նիւթապէս շահագրգռւած է ժողովրդի տգիտութեամբ և կրօնական ստրկութեամբ։ Երկրորդ՝ կրօնական նախապաշարմունքների զէմ, որոնք աշխատաւորական մասսաների մեծագոյն մասի մէջ խիստ տարածւած և խորը արմատներ են ձգած։

2) ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՊԵՏՈՒԹԻՒՆԻՅ

Ըստ քրիստոնէական հաւատի հանգանակի, եկեղեցին հաւատացեալների մի հասարակու-

թիւն է, ուր մարդիկ միմիանց հետ կապւած են մի հաւատով, խորհուրդներով, զաղտնիքներով և այլն։ Կոմունիստի համար եկեղեցին այնպիսի մարդկանց հասարակութիւն է, որոնք միմիանց հետ կապւած են եկամտի որոշ աղբիւրներով՝ ի հաշիւ հաւատացեալների, ի հաշիւ նրանց տգիտութեան ու խաւարամտութեան։ Այդ մի այնպիսի հասարակութիւն է, որ կապւած է ուրիշ շահագործողների հասարակութեան հետ, ինչպէս են՝ կալաւածատէրերը, կապիտալիստները, այդ կապւած է իր պետութեան հետ, որն աշխատաւորութեանը ճնշելու գործում օգնում է եկեղեցուն և իր հերթին նրանից օգնութիւն ու աջակցութիւն ստանում։ Եկեղեցու և պետութեան միջև եղած կապը շատ փաղուցւայ ծագում ունի։ Եկեղեցին առանձնապէս ամուր էր կապւած ֆէօդալական — կալաւածատիրական պետութեան հետ։ Եւ այդ հասկանալի է, եթէ յիշենք, որ ինքնակալական — ազնւական պետութիւնը հիմնւում էր խոշոր կալաւածատիրութեան վրայ, իսկ եկեղեցին իրենից նոյնպէս խոշոր կալաւածատէր էր ներկայացնում, ունենալով միլիոնաւոր դեսեատին հող։ Այդ երկու ոյժերը անխուսափելիօրէն պէտք է միանային աշխատաւոր մասսաների զէմ ընդհանուր կռիւ մղելու և իրենց դաշնակցութեամբ նրանց վրայ իրենց տիրապետութիւնը ամրապնդելու համար։ Քաղաքային բուրժուազիայի՝ ազնւականութեան զէմ մղած կռիւ ժամանակաշրջանում բուրժուազիան մի ժամանակ ուժգին յարձակում էր գոր-

ծում եկեղեցու վրայ, որպէս հողատէրի. այդ հողերը բուրժուազիան ցանկանում էր իր ձեռքը ձգել: Այդ կռիւն մի բանի երկրորդում չքաւ խիստ արտայայտուեց (Ֆրանսիա), միւսներում՝ աւելի մեղմ ձևով Երևան եկաւ (Անգլիա, Գերմանիա, Ռուսաստան): Ուստի և եկեղեցին պետութիւնից զատելու պահանջը (որ փաստօրէն նշանակում էր բուրժուազիայի ձեռքը պէտք է անցնին այն բոլոր միջոցները, որոնք պետութիւնը ծախսում էր եկեղեցու վրայ) արեցին արդէն առաջադէմ բուրժուազիան և բուրժուական դեմօկրատիան: Բայց բուրժուազիան իր այդ պահանջը ոչ մի տեղ չիրականացրեց: Պատճառն այն էր, որ ամեն տեղ ակսեց դօրեղանայ բանւորական դասակարգի կռիւն կապիտալիստների դէմ, և բուրժուազիայի համար երբէք ձեռնառու չէր մի աւելորդ գաշնակից լինել բանւորութեանը: Նա աւելի օգտակար համարեց հաշտել եկեղեցու հետ, զինել նրա ազօթքները՝ սոցիալիզմի դէմ կռուելու համար, օգտագործել խաւար մասսաների վրայ նրա ունեցած ազդեցութիւնը՝ նրանցում ստրկական հպատակութեան զգացմունքները պահպանելու համար շահագործող պետութեան վերաբերութեամբ («իշխանութիւնն տնտեսական ծագում ունի»):

Այն, ինչ որ չարեց բուրժուազիան եկեղեցու դէմ իր կռւում, այդ արեց և փախճանին հասցրեց պրօլետարիական պետութիւնը: Խորհրդային իշխանութեան առաջին զեկրեմներին մէկնէր՝ եկեղեցին պետութիւնից բաժանելու

դեկրետը: Եկեղեցուց խլեցին բոլոր հողերը և յանձնեցին աշխատաւորութեանը, և նրա բոլոր կապիտալները զարձան աշխատաւոր ժողովրդի սեփականութիւն: Եկեղեցուց խլեցին այն բոլոր եկամուտները, որոնք նա ստանում էր ցարիզմից և շարունակում էր ապահովարար ստանալ նաև «սոցիալիստ» Գերենսկու կառավարութեան ժամանակաշրջանում:

Կրօնը յայտարարեց որպէս անհատական գործ իւրաքանչիւր բազաբացու: Միևնոյն ժամանակ Խորհրդային Իշխանութիւնը երբէք չը ցանկացաւ որեւէ ձևով օգտագործել եկեղեցին՝ պրօլետարիական տիրապետութիւնը ամրապնդելու գործում:

3) ԴՊՐՈՅԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵԿԵՂԵՑՈՒՑ

Կրօնական պրօպագանդայի միացումը դպրոցական ուսուցման հետ հոգեւորականութեան ձեռքին հանդիսանում է երկրորդ դօրեղ զէնքը՝ եկեղեցու տիրապետութիւնը ամրապնդելու և նրա ազդեցութիւնը մասսաների վրայ պահպանելու համար: Այստեղ տէրտէրների ձեռքն է տրւում մարդկութեան ապագան, նրա երիտասարդութիւնը: Յարիզմի ժամանակ պետական կարեւոր գործ էր համարում կրօնական մոլեռանդութիւնը, բթութիւնն ու տղիտութիւնը պահպանելը: Կրօնը դպրոցում դաստանդող ամենակարեւոր առարկան էր: Նաև դպրոցում

տութիւնն ու եկեղեցին. արդէն համաձայնութեան հկան և օգնում են միմեանց. բուրժուազիայի եկեղեցու հետ կնքած այդ հաշտութիւնը միայն այն չէ նշանակում, որ բուրժուազիան կրօնի դէմ ուղղած իր հին ռազմական յոգունքները առժամանակ թաղցնում է և դադարում է նրա դէմ կուելուց: Այդ քիչ է: Ինքը բուրժուազիան հետզհետէ աւելի «հաւատացող զառակարգ» է դառնում: Եւրոպական ժամանակակից բուրժուաների նախապապերը աթէիստներ էին, ազատ մտքի տէր մարդիկ, տէրտէրների ու տէրտէրութեան ոխերիմ թշանամիներ: Պապերն ու հայրերը մի քայլ յետ գնացին: Իրենք մտաւոր աթէիստներ, իրենք չը հաւատալով կրօնական կեղծիքներին և քթի տակ դրանք ծաղրելով, նրանք սակայն գտնում էին, որ անհրաժեշտ է պահպանել այդ կեղծիքները, անհրաժեշտ է պահպանել կրօնական սանձը՝ ժողովրդի համար: Վերջապէս նրանց ժամանակակից որդիները կրօնական այդ սանձը ոչ միայն անհրաժեշտ են համարում ժողովրդի համար, այլ և արդէն հէնց իրենք են հագնում: Մեր աչքի առաջ, հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ առաջադէմ բուրժուան և բուրժուական ինտելիգենցիան յլում էին եկեղեցիները և երկիւզածօրէն ծնրադրում այն բանին, ինչի վրայ լաւ ժամանակներում ծիծաղում էին, ծաղրի առարկայ դարձնում: Այդպէս է բախտը այն բոլոր մեռնող զասակարգների, որոնց ոչինչ չի

մնում անիլու, քան — «մխիթարութիւն» դոնել կրօնի մէջ:

Նման մերձեցում յօգուտ եկեղեցու նկատում է եւրոպայի բուրժուազիայի շրջաններում, որը զեռւեւ չի գրկել իր իշխանութիւնից:

Բայց եթէ բուրժուական դասակարգը սկսում է հաւատալ Աստծուն և անսահմանը երկնքում, այդ միայն նշանակում է, որ նա զգում է, որ հասել է իր մահաւան ժամն այստեղ, երկրիս վրայ:

Դպրոցի բաժանումը եկեղեցուց առաջ բերեց և շարունակում է առաջ բերել բողոքներ՝ բանւորների և գիւղացիների աւելի յետամուտ էլեմենտների կողմից:

Ծնողներից շատերը շարունակում են պնդել, որպէսզի կրօնի դասաւանդութիւնը թոյլ տրի զվրոցում ցանկացողների համար՝ որպէս ո՛չ պարտադիր առարկայ: Յետագարձ քայլ անելու նման փորձի դէմ կոմունիստական կուսակցութիւնը ամենավճռական պայքար է մղում:

Դպրոցում թոյլ տալով եկեղեցական խաւարասիրութեան դասեր, թէկուզ որպէս ոչ պարտադիր առարկայի ձևով, — այդ նշանակումէ ցոյց տալ պետական աջակցութիւն կրօնական նախապաշարմունքները ամրապնդելու խնդրում: Այն ժամանակ եկեղեցին իր տրամադրութեան տակ կունենայ պատրաստի աուդիտորիա՝ բազկացած երեխաներից (որոնք զվրոց են գալիս այնպիսի նպատակով, որը միանգամայն հակառակ է կրօնի նպատակին), նա իր տրամադրու-

Թեան տակ կունենայ պետութեանը պատկանող շէնքը և դրա շնորհիւ հնարաւորութիւն կունենայ կրօնական թոյնը տարածելու երիտասարդութեան մէջ համարեայ նոյն չափերով, ինչ որ էր՝ մինչև դպրոցի բաժանումը եկեղեցուց։

Դպրոցը եկեղեցուց բաժանելու դեկրետը պէտք է ամբողջովին մնայ իր ոյժի մէջ և պրօլետարական պետութիւնը չը պէտք է ոչ մի գիշում անի միջնադարեան հասկացողութիւններին։ Դեռ չափազանց քիչ բան է արւած այդ առպարէզում և տգէտ ծնողները դեռ ևս հնարաւորութիւն ունին կրօնական հէքիաթներով իրենց գաւակների միտքը պղտորելու։

Խորհրդային իշխանութիւնը խղճի ազատութիւնը ընդունում է միայն չափահասների համար։ Բայց ծնողներին տրւած խղճի այդ ազատութիւնը նրանց համար դառնում է ազատութիւն՝ թունաւորելու իրենց երեխաների միտքը հէնց նոյն օպիումով, ինչով առաջ եկեղեցին է նրանց թունաւորել։ Ծնողները իրենց գաւակների գլխին են փաթաթում իրենց սեփական բխմամտութիւնը, տգիտութիւնը, ճշմարտութեան տեղ՝ իրենց բանտագուշանքները և այդպիսով չափազանց զժւարացնում են Միասնական Աշխատաւորական Դպրոցի աշխատանքը։ Երեխաների ազատագրումը նրանց յետադիմական ծնողների ազդեցութիւնից, պրօլետարական պետութեան կարեւոր նպատակն է հանդիսանում։ Արմատական միջոցն է երեխաների հասարակական դաստիարակութեան ամբողջական կըրաւումը։ Բայց ան-

հրաժեշտ է, որ առաջիկայում մենք չը սահմանափակենք կրօնական պրօպագանդան դպրոցից դուրս խոկելով, այլ և անհրաժեշտ է, որ դպրոցը յարձակում գործի կրօնական պրօպագանդայի վրայ ընտանիքում և առաջօրէն երեխաների գիտակցութիւնը անզգայ դարձնի դէպի կրօնական հէքիաթները, որոնց շարունակում են հաւատալ չափահաս մարդիկ, շարունակում են հռչակել որպէս իրողութիւն։

4) ԿՈՒԻՒ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՇԱՐՄ ՈՒՆՔՆԵՐԻ ԴԷՄ

Եկեղեցու բաժանումը պետութիւնից և դպրոցի բաժանումը եկեղեցուց՝ պրօլետարական իշխանութիւնը համեմատաբար հեշտութեամբ իրադործեց. բայց նրա համար անհամեմատ զժւար գործ է հանդիսանում կռիւր կրօնական նախապաշարմունքների դէմ, որոնք մասսաների գիտակցութեան մէջ խորը արմատներ են ձգել և հսկայական կենսունակութիւն են ցոյց տալիս։

Այդ կռիւր եկար կը տեսի։ Այդ-մեծ կորով ու համբերութիւն է պահանջում։ Մեր ծրագրում այդ մասին ասւում է. — Ռ. Կ. Կ. առաջնորդում է այն համոզումով, որ մասսաների հասարակական-տնտեսական ամբողջ զորմունքով մէջ զրւած գիտաւորութիւնների և գիտակցութեան իրագործումը ինքնին կը վերացնի կրօնական ամեն նախապաշարմունք։ Ի՞նչ են նշանակում այդ խօսքերը։

Կրօնական պրօպագանդան, հաւատը դէպի Աստուծոյ և դէպի ամեն գերբնական ոյժեր՝ իրենց համար աւելի նպաստաւոր հող են դառնում այնտեղ, ուր հասարակական կեանքի բազոր հանդամանքները մասսաների գիտակցութիւնը տանում են այնպիսի ուղիով, որ բնութեան և հասարակութեան մէջ կատարուող երևոյթներին գերբնական բացատրութիւն է տրուում: Հէնց արդիւնաբերութեան կապիտալիստական միջոցի հանդամանքները նպաստում են այդ ամենին: Բուրժուական հասարակութեան մէջ արդիւնաբերութիւնն ու ապրանքների փոխանակութիւնը կատարւում են ոչ թէ գիտակցաբար՝ որոշ ծրագրով, այլ տարերային ձեով: Զուական իշխում է արդիւնաբերողի վրայ: Ոչ որ չը դիտէ ապրանքը չափից աւելի է արդիւնաբերած, թէ չափազանց քիչ: Արդիւնաբերողների համար պարզ է, թէ ինչպէս է աշխատում կապիտալիստական արդիւնաբերութեան հսկայական և բարդ մեխանիզմը: Ինչո՞ւ յանկարծ սկսւում են կրիզիսներ և բանտրական դործազրկութիւն. տպրանքների գներն ինչո՞ւ են մէկ բարձրանում, մէկ իջնում, և այլն:

Զարբային աշխատաւորը, անկարող լինելով բացատրել տեղի ունեցող հասարակական փոփոխութիւնների իսկական պատճառը, — զիմում է «Աստուծոյ կամքին», որն ամեն ինչ կարող է բացատրել:

Ընդհակառակը, կոմունիստական կազմակերպւած հասարակութեան մէջ, արդիւնաբերու-

թեան և աշխատաւոր ոյժերի բաշխման ասպարիզում, չի լինի և ոչ մի գաղանիք: Աշխատաւորներից իւրաքանչիւրը ոչ միայն կը կատարէ հասարակական աշխատանքի իրեն յանձնարարած մասը, այլ և հէնց ինքը կը մասնակցի արդիւնաբերութեան ընդհանուր պլանի մշակման գործում և, յամենայն դէպս, միանգամայն պարզ հասկացողութիւն կունենայ նրա մասին: Ոչ մի խորհրդաւոր, անհատականալի, անակնկալ բան չի լինի հասարակական արդիւնաբերութեան ամբողջ մեխանիզմում, և միատրիկական բացատրութիւնների ու մոտիւապաշտութիւնների համար ոչ մի հիմք չի լինի: Ինչպէս որ հիւսնի համար պարզ է, թէ ինչպէս առաջ եկաւ իր շինած սեղանը, և նա կարիք չի զգում երկնքում փրնտելու նրա ստեղծողին, այնպէս էլ կոմունիստական հասարակութեան բոլոր աշխատաւորներն համար պարզ կը լինի, թէ իրենք միահամուռ ոյժերով ինչ են ստեղծում և ինչպէս են ստեղծում:

Ուստի և հէնց սոցիալիստական շէնքի կազմակերպման և ամրապնդման փաստը անուղղելի հարւած է հասցնում կրօնին: Բսկ սոցիալիզմից (այսինքն այն հասարակութիւնից, որ ծնունդ է կապիտալիզմի) կոմունիզմին անցնելը (այսինքն այնպիսի հասարակութեան, որը միանգամայն ազատ է դասակարգային բաժանումների ամեն տեսակ հետքերից և դասակարգային կռիւներից) բնական մահւան կենթարկէ ամեն կրօն և ամեն սնոտիապաշտութիւն:

Բայց այս բոլորը երբէք չի նշանակում, որ



3924-84

մենք կարող ենք հանգիստ լինել՝ նախագուշակելով կրօնի խորտակումը ապագայում:

Կրօնական նախապաշարմունքների դեմ ամենալուրջ կռիւ պէտք է մղել առաջին թափով հէնց այժմ, երբ եկեղեցին երևան է գալիս հակայեղափոխական կազմակերպութեան դերում, ձգտելով մասսաների վրայ ունեցած կրօնական ազդեցութիւնը օգտագործել՝ այդ նոյն մասսաներին մասնակից անելու քաղաքացիական կռիւն՝ պրօլետարական դիկտատուրայի հանդէպ:

Պապերի ու տէրութեան ջանքերով պաշտպանող ուղղափառ կրօնը ձգտում է դաշնակցել ինքնակալութեան հետ: Ուստի և Խորհրդային Իշխանութիւնը հէնց այժմ պէտք է ամենալայն չափով զարգացնի հակակրօնական պրօպագանդան: Դրան կարելի է հասնել յատուկ դասախօսութիւնների միջոցով, այդ խնդրի շուրջը դիսպուտներ (դիտական վէճեր) կազմակերպելով, համապատասխան գրականութիւն հրատարակելով և դիտական մտքերը լայն շրջաններում տարածումով: զրանք հետզհետէ, կամաց-կամաց, բայց հաստատապէս կը քանդեն կրօնի բոլոր հիմքերը, կը ոչնչացնեն նրա հեղինակութիւնը: Եկեղեցու դէմ կռւելու լաւ միջոց հանդիսացաւ հետեւեալը. նորերս հասարակապետութեան շատ վայրերում տեղի ունեցաւ «սրբերի» «անփուտ» ոսկրների բացումն, և ամբողջ ժողովրդի ու հաւատացող մասսաների առաջ երևան հանւեց այն ամեն ստոր խաբեբայութիւնը, որի վրայ հիմնուում է ամեն կրօն:

Բայց մասսաների կրօնական յետամնացութեան դէմ մղող կռիւը պէտք է տանել ոչ միայն մեծ եռանդով և հաստատամտութեամբ, այլ և անհրաժեշտ համբերութեամբ ու զգուշութեամբ: Հաւատացեալ մասսան շատ զգայուն է, երբ իր զգացմունքներն են վիրաւորում, և մասսաների մէջ անթիքմը բռնի կերպով արմատացնելը, որ կապւած է բռնութիւնների, կրօնական ծէսերն ու պաշտամունքի առարկաները ծաղրելու հետ, — չի փութացնում, այլ դանդաղեցնում է կռիւը եկեղեցու դէմ: Եկեղեցին, հալածականի դերում լինելով, սկսում է աւելի մեծ համակերանք վայելել մասսաների կողմից և նրանց մէջ զարթեցնում է վաղուց մոռացւած կապերը՝ կրօնի և ազգային ազատութեան պաշտպանի մէջ և ուժեղացնում է անտիսեմիտիզմը և ընդհանրապէս մօբիլիզացիայի է ենթարկում արդէն կիսով չափ մեռած իտեօլօգիայի փշրանքները:

Բեռներ մի քանի թւեր, որոնք ցոյց կը տան, թէ ցարական կառավարութիւնը ժողովրդական փողերով ինչպէս էր պահպանում եկեղեցին, թէ ինչպէս այդ նոյն եկեղեցին պահպանում էր նաև ինքը՝ ժողովուրդը՝ դատարկելով իր սուղ զրպանը, և թէ ինչ հարստութիւն էր դիզել Քրիստոսի սպառաւորների մօտ:

Յարական կառավարութիւնը, սինոդի միջոցով և այլ ճանապարհներով, եկեղեցու համար տարեկան բաց էր թողնում միջին թւով մինչև 50 միլիօն ռուբլի (փորձեցէք հաշւել ներկայ վաւերացումով): Բանկերում պահւում էր սինոդապատ-

կան 70 միլիոն ռուբլի. եկեղեցիները և վանքերը, ունեին հողերի հսկայական տարածութիւններ:

1905 թւին եկեղեցիներն ունէին 1,872,000 դեսետին: վանքերը՝ 740,000 դեսետին: Վեց ամենահարուստ վանքեր ունէին 182,000 դեսետին: Սոլովեցկի վանքը ունէր 66,000, Ղեսեատին, Սարովսկի Անապատը՝ 26,000, Ալէքսանդրոսկի Ղաւրան՝ 25,000 և այլն: Պետերբուրգում 1903 թւին եկեղեցիներին ու վանքերին էին պատկանում 266 կալած (տներ, խանութներ և այլն): Մոսկւայում ունէին 1054 տուն (եկամուտ բերող), չը հաշւած 32 հիւրանոցները: Գիւնում եկեղեցիներին էր պատկանում 114 տուն: Ահա և միտրոպոլիտների ու արքեպիսկոպոսների աւետարանական եկամուտները. Պետերբուրգի միտրոպոլիտը ստանում էր տարեկան 300,000 ռուբլի, Մոսկւայի և Գիւնի միտրոպոլիտները— 100,000 ազան ռուբլի, Նովոգորոդի արքեպիսկոպոսը—310,000 ռուբլի:

Եկեղեցական դպրոցների թիւն էր՝ մօտաւորապէս 30,000. նրանցում սովորողների թիւը՝ մօտ մէկ միլիոն: Լուսաւորութեան մինիստրութեան տարրական դպրոցներում «գործում» էին աւելի քան 20,000 կրօնուսույց.

Ինչպէս յայտնի է, ցարական ինքնակալութիւնը պահպանում էր պրափօսլա եկեղեցին, որպէս գերիշխող. միակ ճշմարիտ եկեղեցի: Հարկերի ձեռով տասնեակ միլիոններ էին հաւաքում մուսուլմաններից (թաթարներ, բաշկիրներ), կաթոլիկներից (լեհեր), հրէաներից, և պրափօս-

լա հոգեւորականութիւնը այդ փողերով ապացուցում էր բոլոր այլ կրօնների ստույթիւնը, բացի պրափօսլա կրօնից: Յարիզմի կրօնական ճնշումը հասել էր ամենավայրենի չափերի: Մինչ դեռ ռուսաստանի ազգաբնակչութիւնը ըստ կրօնների այսպիսի պատկեր էր ներկայացնում. —ամեն 100 մարդուն ընկնում էր— կաթոլիկ՝ 9, մահմետական՝ 5, բողոքական՝ 5, հրէա՝ 4, այլ դաւանութեանց պատկանող՝ 1 հոգի:

Իսկ ինչ վերաբերում է պրափօսլա հոգեւորականութեան բանակին, — 1909 թ. այդ հասել էր հետեւեալ չափերի:

Ռուսաստանի 52,869 եկեղեցիներում կային՝	
աւագ քահանաներ	2912.
քահանաներ	46730
սարկաւազներ	14,670
տիրացուներ	43,518
455 արական վանքերում կային՝	
վարդապետներ	9987
մոնթեր	9582
418 իգական վանքերում կային՝	
կոյսեր	14008
մոնթուհիներ	48,811

Ընդամենը սե ու սպիտակ հոգեւորականութիւն ռուսաստանում 188,218

Այդ միայն պրափօսլա հոգեւորականութեան թիւն է. Բայց նման տղրուկային դաս գոյութիւն ունի այլ կրօններ դաւանող բոլոր ժողովուրդների մէջ: Այդ ամբողջ մասսան, փոխանակ ազգաբնակչութիւնից հսկայական փողեղ

զանձելու և ժողովրդական տգիտութիւնը պահպանելու, կարող էր ֆիզիկական աշխատանքով ահագին քանակութեամբ արժէքներ ստեղծել: Սոցիալիստական պետութիւնը, տնտեսական իր ապարատը կատարելագործելով, աշխատել կը հարկադրէ նաև հոգևորականութեանը և ուրիշ՝ չարղիւնարեւող դասակարգերին, զրանց դարձնելով քանութիւններ կամ երկրագործներ:

Յարի օրով պետական միջոցներից եկեղեցուն քան 12,000,000 րուբլի ստանում էր քաղաքային և գիւղական հոգևորականութիւնը (հասկանալի է, թէ ինչու հոգևոր հայրերը հակառակ են եկեղեցին պետութիւնից բաժանելուն, որ համագոր է՝ իրենց զբաղմունքներից տասնեակ միլիոնները բաժանելուն): Բայց այդ միայն մի մասն է հոգևորականութեան եկամուտների. այդ եկամուտների անհամեմատ մեծ մասը ստացւում էր ծիսակատարութիւններից, հոգերի արեւողից, եկեղեցական կապիտալների տոկոսներից: Հոգևորականութեան եկամուտների ստույգ թիւը Ռուսաստանում ոչ ոք չը կարողացաւ իմանալ: Հոգևորականութեան տարեկան եկամուտի թիւը հասնում էր մոտաւորապէս 150,000,000 րուբլու, այսինքն, մեր ներկայ փողով, 1000 անգամ անելի: Այդ եկամուտների հսկայական մասը հոգևորականութիւնը մինչև այժմ էլ շարունակում է ստանալ ժողովրդից:

Литература. Кильчевский: «Богатства и доходы духовенства». Н. М. Лукин (И. Литс-

нов): „Церковь и государство в переходное время“. С. Минин: „Религия и коммунизм“. И. Степанов: „Происхождение нашего бога“. И. Степанов: „Духовенство, его доходы, его молитвы и проклятия“. Г. Кунов: „Происхождение религий и веры в бога“. К. Каутский: „Происхождение первобытной библейской историй“. К. Каутский: „Античный мир, иудейство и христианство“. К. Каутский: „Католическая церковь и социал демократия“. А. Бебель: „Христианство и социализм“. Штаммфер и Вандервелде: „Социал демократия и Религия“. Лафарг: „Происхождение религиозных верований“. С. Данилов: „Черное воинство“. Р. Кольвер: „Социал демократия и христианство“. Н. Бухарин: „Церковь и школа в Советской Республике“. Я. Буров: „Что означает закон и свобода совести“. П. Лафарг: „Миф о непрочном зачатии“. Никольский: „Иисус и первые христианские общины“. Виппер: „Возникновение христианства“. Покровский: „Русская история“ (статья Никольского). Д. Бедный: „Отцы духовные“.



1. The first part of the paper is devoted to a general
 introduction of the subject. It is shown that the
 problem of the existence of a solution of the
 differential equation $y'' + p(x)y' + q(x)y = r(x)$
 is equivalent to the problem of the existence of a
 function $y(x)$ which satisfies the boundary conditions
 $y(a) = \alpha$ and $y(b) = \beta$. This is done by
 means of the method of variation of parameters.
 2. In the second part of the paper, the problem of
 the existence of a solution of the differential equation
 $y'' + p(x)y' + q(x)y = r(x)$ is considered for the
 case in which $p(x)$ and $q(x)$ are continuous functions
 on the interval $[a, b]$ and $r(x)$ is a continuous
 function on the interval $[a, b]$. It is shown that
 a solution of the differential equation exists if and
 only if the function $r(x)$ satisfies the condition
 $\int_a^b r(x) dx = 0$. This is done by means of the
 method of variation of parameters.
 3. In the third part of the paper, the problem of
 the existence of a solution of the differential equation
 $y'' + p(x)y' + q(x)y = r(x)$ is considered for the
 case in which $p(x)$ and $q(x)$ are continuous functions
 on the interval $[a, b]$ and $r(x)$ is a continuous
 function on the interval $[a, b]$. It is shown that
 a solution of the differential equation exists if and
 only if the function $r(x)$ satisfies the condition
 $\int_a^b r(x) dx = 0$. This is done by means of the
 method of variation of parameters.
 4. In the fourth part of the paper, the problem of
 the existence of a solution of the differential equation
 $y'' + p(x)y' + q(x)y = r(x)$ is considered for the
 case in which $p(x)$ and $q(x)$ are continuous functions
 on the interval $[a, b]$ and $r(x)$ is a continuous
 function on the interval $[a, b]$. It is shown that
 a solution of the differential equation exists if and
 only if the function $r(x)$ satisfies the condition
 $\int_a^b r(x) dx = 0$. This is done by means of the
 method of variation of parameters.